ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ԴՈՐՄՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ն. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայ գրականության առաջ կանգնած հիմնական խնդիրներից մեկը նրա ձևավորման շրջանում, նեղ գրական առումով, կերպարներ ստեղծելու խնդիրն է եղել, քանի որ խորապես անհատականացված և ընդհանրացնող արժեք ունեցող կերպարների շնորհիվ է գրողը հասնում իրականության արտացոլման տիպականության։ Գեղարվեստական կերպարն է մարդուն ներկայացնում նրա բնավորության կենդանի ամբողջության, նրա դաղափարների ու ապրումների բնական միասնության մեջ։ Լիարժեք կերպարի ստեղծումը ամեն մի գրականության հասունացման առհավատչյան է։ Գրական կերպարին նախորդում է մարդկային բնավորությունների բացահայտումը, ցուցադրումը այն հատկանիշների, որոնք անհատին դարձնում են կենդանի գործող անձ, ինչը գոյության հիմքն է ամեն մի առողջ գրականության։

Բոլոր լուսավորիչների նման Աբովյանը ևս ուներ իդեաներ, բայց չուներ, իրականության մեջ չէր հանդիպում իր իդեաները կրող անձերի. նա ինքը պետք է հորիներ դրանց, սկսելով հենց գաղափարներից, ոչ թե իրական, կենդանի անձերից մակաբերելով նրանց բնավորությունը, հայացքը, նախասիրությունը, վարքն ու բարքը, այլ մարդկային բնավորության այս կամ այն, դրական կամ բացասական հատկությանը հարմարեցներ նրա մարմինը կամ կեղևը։ Եվ ահա, կենդանի, հեղինակից օտարացված մարդու փոխարեն քայլում կամ խոսում են նրանց բնավորության վերուստ բաշխված հատկանիշները՝ քաջություն, բարություն, հեզություն, ուսումնածարավություն, ծուլություն, աշխատասիրություն, մաքրասիրություն և այլն։ Անձը դեռ չի դառնում անհատ, չի դառնում ես։

Ինչ վերաբերում է Աբովյանի գլուխ-գործոցի՝ «Վերք Հայաստանի» վեպի կերպարներին, ապա դրանք թեև խստորեն անհատականացված չեն, դարձյալ մնում են մեր հիշողության մեջ։

Սրանք կարող են բաժանվել երկու խմբի. անձեր, որոնք անմիջապես Աբովյանի հետ են կապվում, նրա ազգականներն են կամ ընկերները, և անձեր, որոնք իրական, պատմական են։ Առաջին խմբի մասին այն կարելի է ասել, որ դրա մեջ մտնող կերպարները (Աղասու մայրը, Նազլու, Կարո, Թագուհի, Մուսա) չեն հեռացել կամ համարյա չեն հեռացել իրենց նախատիպերից։ Նրանց վրա նետված այսպես ասած բանաստեղծական լույսը նույն լարվածությունն ունի, ինչ որ ամբողջ վեպի վրա նետվածը։

Փորր ինչ այլ է պատմական անձերի խնդիրը։

Վալերիան Մադաթովը, 1812 թ. հայրենական պատերազմի այդ հերոսը, որ բիչ առաջ փայլուն հաղթանակ էր տարել պարսկական բանակի դեմ՝ Շամ-

խորի ճակատամարտում, ռազմական իր փայլուն ընդունակությունները դրսևորում է նաև ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, նրա վերջին փուլում՝ Երևանի ազատագրման ժամանակ։ Հիացմունքով ու հպարտությամբ է հիշում նրա արարքը Աբովյանը։

«Առավոտը էն ա լսին էր տալիս՝ որ իշխանն և քաջահաղթն գեներալ մայոր Մատաթովն վեր կացավ, Շամբոռա գզին մտիկ արեց, զորաց ինչ հրաման ուներ տվեց, ու ինքը արծվի աչքերովը Գրիգոր եպիսկոպոսը ու Հայերի իշխանները քամակը քցած, օրդվի չորս կողմովը պտիտ տալով՝ մտիկ էր անում սարերի գլխին, խոռ տեղերին դուրբնով, որ թշնամին հանկարծ վրա չտա ու իր պատրաստությունը տեսնում էր։ Զորքը զորթ ա շատ քիչ էր, ամա Մատաթովն էր նրանց գլխին, որ սար ու ձոր դողացնում էր, որ Աստուծո տեղ պաշտում էին, որ Ղզլբաշի հոգին ջուր էր կտրում, անունը լսելիս ու իր հավատարիմ ազգը՝ արինը աչքումը, շունչը բերնումը, գլուխը փեշումը, հազիր վառված քամակին որ տուն, տեղ, որդի, օղլուշաղ, մալ, դալվաթ թշնամուն յա գերի տան, յա Ռսի թուրը նրանց աչքը խրել տան։ Զորը խփեցին, առավոտյան ազոթքն արին, բայց մեկն էլ ա գեռ չէր գիտում, թե ո՞ր կողմովը գնան։ Ղզլբաշի զորքն Գյանջա, Ղարաբաղ էս կողմիցն էր առել, ոտնատակ տվել, Փամբակ, Շորագյալ էն, էս կողմիցը Աբաս-միրզեն, էն կողմիցը Հասան-խանը քանդելով, ավերելով էկել՝ հասալ էին Թիֆլիզ՝ որ գնան Պետերբուրգ, ինչպես որ տեսանը, սհաթե սհաթ աչքը կթած ուներ, թե Աղա Մամադ-խանի կրակը որդիանց որ ա էլ կրկին իր գլխին կթափի։ Սրմալովն ինչ հնար, ճարտարություն ուներ՝ գործ դրեց։ Մատաթովը պետք էր Վրաստանու փրկիչը լիներ, ու ցույց տար աշխարքի թե Հայոց հոդումը իրենց հին հսկայության կրակը, քաջության բոցը, հավատարմության խունկը դեռ կար ու վաղուց մխում էր, որ մեկ հով դիպչի՝ հոտն աշխարը ընկնի, կրակն իրանց թշնամուն, իրանց աշխարքը քանդողին էրի, փոթոթի» (III, 174—175)։ Եվ ապա. «Ա՛վ էն ժամանակը կամ տեսած կամ լսած կըլինի, թե Մատաթովն ի՞նչ արեց, նհախ տեղը չի՞ նրա անունը Հայի, Թուրքի, Ղզլբաշի բերնումը մնացել։ Աշխարք տակ ու վեր կրլի, բայց նրա հիշատակը անջնջելի կմնա մեր ազգի միջին ու մեր աշխարքումը» (III, 176)։

Եվ այսպես. Մադաթովի զրական կերպարի մասին խոսք լինել չի կարող. այն, ինչ կարդացինք, հերոսի քաղաքական բնութագրությունն էր, ուրիշ ոչինչ։ Ընդհանուր ձևով է բնութագրվում նաև Ներսես արքեպիսկոպոսը, որը նույնպես զրական կերպար չէ, թեև նրա անունը մեկից ավելի անգամ է հիշվում վեպի վերջին էջերում։

Շատ աղոտ և միակողմանի է տրված նաև Հասան խանի՝ Երևանի վերջին սարդարի ուրվանկարը։ Նա Հուսեին խանի եղբայրն էր և Երևանի խանության հեծելազորի հրամանատարը։ Նա արևելյան մի նողկալի բռնակալ էր, որի մասին խոսելիս Աբովյանը, եթե կարելի է այսպես արտահայտվել, ֆիզիկապես տանջվում է։ «Արինակեր Հասան խան» արտահայտությունը նրա համար ամենասովորականն է։ Եվ, այնուամենայնիվ, չնայած իր ողջ հակակրանքին, Աբովյան-արվեստագետը հանդես է բերում հպվազգյուտ տակտ, չափի զգացում։ Նա չի ուրանում թշնամու ո՛չ քաջությունը, ո՛չ էլ զոռոզ հպարտությունը. Աղասու ոտքերի տակ ընկած Հասան խանը իրեն դրսևորում է իբրև փորձված մի մարտիկ։

Արտագրում եմ այդ հատվածը որոշ հապավումներով.

«Հասան-խանը՝ որ աչքը չի՛ բարձրացրեց ու Աղասուն ձիու անկաճը մրտած եղևիցը քշելիս տեսավ, ոտն ու ձեռքը թուլացան. ուզում էր՝ ձին բաց թողի ու քարափնիվեր՝ Արփաչայի ձորն ընկնի, ուզում էր՝ որ ինքը իր թուրը իր սիրտը խրի, որ չասեն՝ թե Հասան-խանին սպանեցին, քարին իր գլուխը մատաղ տա, քանց մեկ ուհաթ Հայի՝ որ հաղարներով հենց էն տեղարենքն էր սուրը քաշել, տանով, տեղով էրել, գերի արել. բայց էլի ռաշդի սիրտը ոչինչ տեղ էնքան զայիմ չի ըլիլ՝ որքան եդին սհաթումը, կյանք ու մահ կռվելիս։ Մեկ չարեք վերստաչափ տեղ էր մնացել, որ շունչը քամուն տա, հենց էն ա՝ թուր, ասպաբ ուզում էր՝ որ եդ անի, ձին բաց թողա, մեկ քարի տակ չոքի ու բալքի իր թշնամուն դյուլով էլա վախացնի կամ սպանի՝ վախտն անց էր կացել։ Հսկան Աղասի թուրը սրտին ղեմ արեց. «Վե՛ր քցի թուր ու թվանք ձեռքիցդ՝ որ էս սհաթիս փառչալամիշ կանեմ։ Դու էստեղ չի պետք է սատկիս՝ հայակեր շուն. իմ թուրն ափսո՛ս ա, որ քեզ պես թշվառ ճիճուն սպանի... Քար ըլեր՝ կպատռվեր էս խոսքերիցը, ի՞նչ թե Հասան-խանը, աշխարքի տերը, երկրի քանդողը, ամեն բանը տարավ համբերությամբ, ձեն չի հանեց։ Քուրդ ասեր, օսմանցի ասեր նրան էս խոսքերը՝ ե՞րբ էնքան կցավեր. Հայից էսպես թուք ու մուր ստանա, որ մինչև էն օրը խոտ, աղբ էր համարում։ Հայը նրա հավատը ոտի տակ տա՞։ Արինը կոխեց աչքերը, մեռած հոգին՝ հենց գիտես՝ նոր շունչ առավ, ատամները ղրճտացրեց, աչքերը կայծակին տալով՝ տեղիցը վեր թռավ ու կատաղածի պես ղամեն հանեց, վրա պրծավ. «Հայի շուն՝ դո՞ւ մնացիր, Հասան-խանի վրա ոտը բարձրացնես, դո՞ւ մնացիր՝ ձեր հոտած հավատի լափն իմ գլխիս ածես...» ասաց ու կատաղությամբ ղամեն էնպես Աղասու վրա շպրտեց՝ որ թե ձին չէ՛ր խրտնել, ու Աղասին գլուխը կռացրել, ղամեն սրտի մեջտեղը պետք է ցցվեր... «Խան՝ կատաղած գիլի կերած մսի համը դեռ ատամների տակը կրլի, արինակե՛ր գազան՝ էդպես հո չեն խփիլ, կամ գողի պես վրա պրծնիլ»... ասաց հսկան ու ձիուն ղամշեց, կատաղած ձին բերանը փրփուրը լիքը՝ առաջին ոտները որ չի բարձրացրեց ու թռավ, Հասան-խանի լեղին ջուր կտրեց. բայց բաղդը բանեց, ձին որ թռավ, նա մնաց մեջ տեղը անվնաս. մինչև Աղասին ձիու ջիլավը կքաշեր ու եդ կդառնար, Հասան-խանը հոգի առավ, փշտովը հանեց, ձիու ճակատը եդ դարձնիլը ու փըշտովի տրաքիլը մեկ էլավ. հայվանը փռնչաց. երկու քթիցը արինը պրծավ, առաջի ոտների վրա էնպես չոքեց ու գետնին դիպավ՝ որ Աղասու ոտի մատները օրգանդվին կպավ, սչքը կեծակին տվեց, սևացավ, արինը սրտումը թան դառավ։ Մինչև Աղասին ոտը օրգանգվիցը կհաներ, մինչև ձեռը թրին կհասներ. ու ձիու տակիցը կրարձրանար, Ասլան Հասան-խանը վրա հասավ, երկու լարանոց թուրը շողաց. բար ու ձոր սկսեցին էն ա՝ էլ իրանց գլուխը լալ— Ասլան Աղասին գլուխը որ սաստիկ թափ չի տվեց, էլ էդ փոքր արինը տաքացավ, մեկ ոտը օրգանգվումը, ձախու ձեռը թրին ղուրբան տալով, թշնամու դեմը բռնելով, աջու ձեռը որ Հասան-խանի գլխովը չի պտտեց, քաքուլի կամ միրքի մազի տեղ՝ չանեն ընկավ ձեռքը. մատները բերնումը, բիթը բողազի տակին՝ չանեն որ հուսի չտվեց, Ն թաք թաք հին ատամներն էլ որ էստեղ, էնտեղ երևում էին՝ ճռռացին, իրար կպան ու փշուր-փշուր էլան, գլուխը հավի գլխի պես պտտելով՝ էնպես սաստիկ ոլորեց, որ բոլոր տամարները ճռճռացին ու Երևանու Աստծու գլուխը Աղասու մեկ ոտի տակին մնաց, փորը մյուս, ու

էսպես կանգնած վրեն՝ ինչպես սուրբ Գևորգ իր վիշապի գլխին՝ սկսեց մեր հսկան մուշամբեն հանել, որ միշտ հետը ման էր ածում, դեմն ատամով ու աջու ձեռով յարեն կապիլ, դեմը էլ հավատի քարոզ կարթալ....» (III, 104—106)։

Ափսո՜ս, որ չի կարելի ստուգել, թե տվյալ հատվածում ո՞րն է պատմական ճշմարտությունը և ո՞րը՝ հեղինակի երևակայության արդյունք։ Ստուգապես նման իրադրության մեջ հանդիպե՞լ են արդյոք Աղասին ու Հասան խանը, դժվար է այժմ ասել։ Մադաթովին ասած Աղասու խոսքերից պետք է հետևցնել, որ դա, իրոք, պատահած պիտի լինի, քանի որ նման դեպքերում, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ Աբովյանը գործ ունի պատմական փաստերի հետ. արտակարգ պատասխանատվություն է զգում իր խոսքի համար. սովորականի նման, ճիշտ է, շատ է խոսում, բայց երբեք իր կողմից չի հորինում։ Վերջապես չմոռանանք, որ նա անձամբ մոտ է եղել Աղասուն, նրանից էլ լսել է այդ ամբողջ պատմությունը։

Պատճառն այն բանի, թե ինչպես է, որ Աբովյանի վեպում նույնիսկ երրորդական անձերը որոշակի, երբեմն նույնիսկ անմոռաց տպավորություն են գործում, մեզ տանում է դեպի նրա արվեստի առանձնահատկություններից մեկը։ Բանն այն է, որ Աբովյանը երևույթը դիտում է իր շարժման ու զարգացման մեջ։ Նա շարժման մեջ է դնում նաև իր հերոսներին, կենտրոնական լինեն դրանք, թե երկրորդական։ Որպես օրենք, նրանք հանդես են գալիս գործողության ամենալարված մի հատվածում, այսինքն՝ դառնում են ոչ թե դեպքերի հանգիստ դիտող, այլ անմիջապես նետվում են դեպքերի շրջապտույտի մեջ։ Եթե սրան ավելացնենք և այն, որ «Վերք Հայաստանիում» զարմանալի ուժեղ է տրված միջավայրը, այնքան ցայտուն, որ լիովին հիմնավորում է հերոսների արարքը, դարձնում նրանց բնավորություններ՝ պատկերը միանդամայն պարզ կլինի։

Վերցնենք գսեղցի Հովակիմ Թումանյանին, խլղարաքիլիսեցի Սարգսին և նրա որդի Վարդանին։ Առաջինի բնութագրությունը միայն հեղինակային է, անհամեմատ սեղմ, բայց չնայած այդ սեղմության, նա մեր առաջ է կանգնում իր ամբողջ դյուցազնական հասակով։ «Աժդահա, ու ոչ տղամարդ։ Չորս գազ ու կես բոյն էր, գազ ու կես թիկունքի լենությունը, դոշը ապառաժի պես հաստ, ամեն մեկ ձեռը մեկ սնի ղադար, ամեն մեկ ոտքը մեկ կաղնու ճուխկը, շլինքը մեկ ծառի քորի հաստությունով, երեսը՝ մազն էկել, կոխել՝ երկու թիզ ճակատի տակին՝ սև սև ունքերն է՛նպես էին բռնել ու նրա արծվի աչքերն ու քիթը կոխել, ինչպես կարկտախառը ամպը՝ գիշերվան աստղերը։ Քիթ ու պռունկն էնպես էին մազի միջումը կորել՝ ինչպես մեկ ապառաժ քար ջանջալի, թփի միջումն» (III, 91)։ Եվ ապա. «էն սևացած, արևի, անձրևի տակի մուր դառած ունքերի տակիցը՝ որ աչքը չէր ընկնում մարդի երեսի՝ էնպես էր իմանում, թե կայծակն ա խփում, ու սար ու ձոր սևանում էր իր գլխին, գետինը պատռում, ու ինքը քար դառած մնում առաջին կանգնած» (III, 92)։ Միայն մի դեպք է պատմում հեղինակը քաջի կյանքից, և ահա կերպարի ուրվագիծը պատրաստ է. տասնհինգ լազդիների հարձակման և նրանց բոլորին կոտորելու պատմությունն է այդ։ Սրանից հետո չես կարող չհավատալ, թե նա ի զորու է պահպանելու Դսեղի և շրջակա շատ գյուղերի ազատությունը Լոռու անտառներում վիտացող ավազակաբարո ցեղերի դեմ։

Խլղարաքիլիսեցի Սարգիս աղային և Վարդանին մենք հանդիպում ենք այն ճակատագրական պահին, երբ Սարգիսը պատրաստվում է դիմադրել Հասան խանի կանոնավոր բազմահազարանոց բանակին։ Տեսեք, թե ինչ եռանդուն, խրոխտ են հնչում նրա առաջին իսկ բառերը. «Տղերք, օյաղ կացեք, թվանքներդ հավրեցեք, երեխեք, օղլուշաղ բերեք՝ մեր տունն ածեք»։ Նրա քաջալերիչ խոսքը՝ ուղղված յուրայիններին և մնաս բարովի խոսքը՝ Վարդանին ուղղված, մի խոսք է, որ կարող է հնչած լինել բոլոր հայ հայրենասերների բերանում, սկսած Վարդան Մամիկոնյանից։ Դա պաշտպանվող հայրենասերի խոսքն է իր մարտիկներին այն բոլոր դեպքերում, երբ ուժերն անհավասար են, վիճակը՝ օրհասական։ Բայց չէ՞ որ փոքր ու մեծ մարտերի այդ շղթան ձգվել-երկարել է դարեր շարունակ... Ահա թե ինչու այս հերոսի խոսքը կոնկրետ է և ընդհանուր՝ միաժամանակ. այն պաթետիկ կարող է հնչել բոլոր նրանց համար, ովքեր չգիտեն մեր ժողովրդի պատմությունը։ Ինչ վերաբերում է դսեղցի Հովակիմին, խլղարաքիլիսեցի Սարդսին կամ բայազետցի Մանուկին, նրանք լավ գիտեն այդ պատմությունը, ճանաչել են իրենց սպիներից։ Աբովյանն իրավունք ուներ պարծենալու իր ժողովրդով, այդ ժողովրդի հավաքական հայրենասիրությունն ու քաջությունը պայմանավորված էին նաև գիտակցական մոտեցումով իր պատմության նկատմամբ։

Կատաղի դիմադրության հանդիպած Հասան խանը դիմում է սովորական դարձած մի խորամանկության, որ կապ չունի ռազմական արվեստի հետ։ Նա հրամայում է զորքի առաջը բերել գերված հայերին, այդ թվում նաև կանանց, ծերերին ու մանուկներին... Ահա՛ և քաջը պետք է որոշի իր դիրքը. պաշտպանվելու համար կոտորել նախ յուրայիններին։ Պատանի Վարդանի ներվերը չեն դիմանում. նա կողմնակից է հանձնվելու։ Այլ կերպ է մտածում ծեր Հսկան. «Ամեն մարդ իր գլխի տերն ա». գոռաց էս անսիրտ հալևորը էնպես՝ որ աչքերիցը կրակ էր վեր թափում. «Էնչի՞ են էսքան խեղճացել, որ իրանց թուրը իրանց սիրտն են կոխում։ Մարդ որ իր տանը, իր աշխատանքին մողայթ չի կենա, իր հողի ղադրը չգիտենա, մեռնի մեկ օր հառաջ լավ ա, քան սաղ մնա. հողն էլա հո կդինջանա։ Նրանք էն վախտը կըլին մեր ազգը, հայ քրիստոնյա, որ թե էս սհաթին դոնմիշ կըլին ու համ իրանց կազատեն, համ մեզ քոմակ կանեն։ Գլխիցս ձեռ վերցրու, դու դեռ ջահել ես. հալա մեծացիր՝ եդո ինձ խրատ տուր» (III, 101)։

Այն ճշմարտությունը, թե երբ թշնամին բարբարոս է, հումանիզմին անհաղորդ, նրանից գթություն չեն հայցի, Վարդանն ուշ է հասկանում, այն ժամանակ, երբ այդ ճշմարտությունն իրեն այլևս պիտանի լինել չէր կարող։ Իր վրեժն այժմ նա պետք է հանի գերմարդկային տոկունությամբ, և նա մահ է ընդունում բազմապատիկ անգամ մարտիրոսանալով։

Աղասու ընկերներից մեր հիշողության մեջ շատ թե քիչ միայն երկուսն են մնում՝ Կարոն և Մուսան։ Առաջինը կազմակերպում է Աղասուն Քանաքեռից փախցնելու և Ապարանում իրենց հետապնդողներին դիմագրելու գործը։ Մուսան աչքի է ընկնում պարսկական սահմանն անցնելուց հետո, Փամբակում, ըստ որում ո՛չ կռիվներում (այստեղ բոլորն են քաջ ու անձնազոհ), այլ՝ զգացումների աշխարհում։ Խմբի մեջ ամենաերիտասարդն է նա, նոր միայն առնականության սեմը ոտք դրած։ Որ այդ տարիքում նրա սրտում կարող է սիրելու և սիրված լինելու բուռն զգացում ծնվել, ինքնին հասկանալի է, բայց

հեղինակը դրան միստիկական մի երանգ է տալիս, որով նրա հոգեկան վիճակը դարձնում է նվազ համոզիչ (III, 152—156)։

Որտեղի՞ց է գալիս աննպաստ այդ տպավորությունը։

Դժվար չէ պատկերացնել, թե պարտիզանական այդ խմբում ինչ կարող էր լինել զրույցների հիմնական նյութը. առևանգումներ, գերեվարություններ, սպանություններ, հարձակումներ խաղաղ բնակչության վրա, կոտորած, թալան, նորից կոտորած, այսինքն այն ամենը, ինչով ապրում էր հայկական հողն այդ տարիներին։ Անբնական չէ ուրեմն, որ սեր որոնող Մուսան երազում մի գեղեցիկ աղջիկ տեսնի, երբ իր շուրջը՝ սարերում ու դաշտերում շատ այդպիսի աղջիկներ են նրան հանդիպում, նրա քաջագործություններն առիթ բրոնելով՝ ծաղկող հասակով հիանում։ Անբնական չէ նաև, որ երազների այդ աղջիկը հենց նրան հայտնի, թե ինքը գերի է, թե իրեն տանջում են, որ թուրքացնեն, թե իրեն՝ իր ազատողին է սպասում։ Մինչև այստեղ նրա երազը հոգեբանորեն պատճառաբանված է։ Ուշադրավ է, որ Մուսայի հոգեկան այս վիճակը չի վրիպում նաև Աղասու աչքից։ «Նա տեսնում էր, որ ջիվան Մուսին մեկ աղջկա ձեն լսելիս, մեկ աղջկա պատկեր տեսնելիս՝ իրանից գնում, խելքամաղ էր ըլում, ամա էնպես կարծում էր՝ թե էս է՛ն առաջին կրակն ա, որ ամեն ջահել մարդու սիրտ վառում, բորբոքում ա, երբ ինքն իրան ճանաչում ա, երբ արինը եռ ա ընկնում ու սար ու ձոր մարդուս աչքին յա սազ ու բյամանչա են դառնում, ուշ ու միտքը տանում, յա թուր ու դանակ դառնում, սրտումը ցցվում» (III, 154)։ Մուսայի երգած բայաթին վերջնականապես ցրում է Աղասու կասկածը. «Ա՛յ ջիվան, ջիվան տղա,— մտածում է Աղասին,— լավ իմանում եմ, ինչ թուր ա էկել՝ սրտիդ դեմ արել. ի՞նչ կրակ ա ընկել՝ լերդդ էրում ու ջիդյարդ. բայց ի՞նչ անեմ, ընչի՞ չես սիրտդ եդ բանում, որ մեկ քո ցավդ իմանամ, ու էլած կյանքս էլ քո ուղուրիդ մատաղ անեմ» (III, 155)։ Բայց հենց այդ րոպեին նա լսում է երազում խոսող Մուսային, որ ասում է. «Հա Հոիփսիմե ջան՝ քո ջանին զուրբան, քո սրբի անունի կտամ ու էքուց, էքուց Ղարսա սարերումն ինձ կտեսնիս» (III, 155)։ Այս սուրբն է հենց, որ փչացնում է գործը. պետք է ենթադրել, որ հենց նա էլ հուշել է սիրած աղջկա ոչ միայն տեղը, այլև անունը։ Սա Աբովյանի արվեստի ամենաթույլ տեղերից մեկն է։ Բայց մենք պիտի հանդուրժող լինենք. միշտ հարկ է հիշել, որ Աբովյանի ապրած դարաշրջանում արարքի հոգեբանական հիմնավորումը դեռ նոր պետք է դրական տեսությունից նրա պրակտիկային անցներ. գերբնական ուժերը բանականության կողմից ապօրինի էին հայտարարված, ճիշտ է, բայց կենցաղից իսպառ չէին վտարված։

Դրական երկի մեջ կարո՞ղ է որևէ անձ կերպար դառնալ, եթե նա ոչ մի բառ չի արտասանում։ Կարող է, անշուշտ, եթե միայն մասնակցում է գործողության զարգացմանը, մնում է այդ գործողության մեջ որպես նրա անհրաժեշտ օղակներից մեկը, մեկը նրանցից, որոնց վրա խարսխվում է դեպքերի հետագա զարգացումը։ Այդպիսի մի անխոս, բայց իրապես շատ պերճախոս կերպար է «Վերք Հայաստանի» վեպում Թադուհին, նա, որին առևանգելու պահին փրկում է Աղասին, նա, որի պատճառով Աղասին իր ընկերների հետ պարսիկների գրաված հողերից անցնում է ռուսների կողմը, վերջապես նա, որի հետ անխզելիորեն կապվում է գլխավոր հերոսի ամրողջ անձնական կյանքը, որովհետև եթե նրա հորը Երևանի բերդը չնետեին և նա

չշտապեր ժամ առաջ աղատելու նրան,— ողջ կմնար նաև Երևանի ազատագրումից հետո։

Անխոս մնալով հանդերձ՝ նա մի կենդանի, խայտացող արարած է, համակ անմեղություն, համակ գեղեցկություն, անարատ, ինչպես ծաղիկը լեռան անմատչելի լանջին։ Մենք նրա բարեմասնությունների մասին իմանում ենք հեղինակից և հեղինակին փոխարինող մորից։ Կարելի է կասկածի տակ առնել հասուն մարդուն տրված գովասանքը, բայց նորահարսին տրվածը վեր է ամեն տարակուսից։ Եթե նա բռնության զոհ է, ապա անմեղ է, գեղեցիկ, հեզ, հրեշտակ, ամեն բան... Բայց թվացող հիպերբոլը կդադարի այդպիսին լինելուց, եթե նկատի ունենանք, որ Աբովյանը ողբում է ոչ թե քանաքեռցի այսինչ մարդու այսինչ աղջկա առևանգումը, այլ բոլոր առևանգված հայ աղջիկներին, ովքեր դարերի ընթացքում բռնակալների ձեռքով պոկվել են իրենց տնից-տեղից, ծնողներից ու հարազատներից, խոշտանգվել են կամ ստրկացվել։ Թագուհին, այսպիսով, հավաքական մի կերպար է, ըստ որում հավաքական է և՛ նրա անմեղությունը, և՛ գեղեցկությունը, և՛ խոնարհությունը։ Այստեղ է հենց Աբովյան-արվեստագետի ուժը, այս խորահմուտ մտածողության մեջ։ Կերպարից հեռանալ, կերպարին տալ հավաքական, ընդհանրական գծեր,— ահա՛ նրա պոետիկայի ուշագրավ գծերից մեկը։

Զափազանց աղոտ են Աղասու մոր և կնոջ՝ Նազլուի կերպարները, այնքան թույլ և աննշմար, որ «կերպար» գրականագիտական տերմինն այստեղ միանգամայն անտեղի է։ Նրանք հիշատակվում են շատ անգամ, բայց որովհետև գործողության մեջ չեն մտնում, ուստի չեն առանձնացվում, անձ չեն դառնում։ Եթե չասենք «Աղասու մայրը», ապա ոչ ոք նրան չի ճանաչի։ Իր դրական գործունեության ընթացքում հեղինակը Նազլուին կրկին և կրկին է անդրադարձել, բայաթիներ է նվիրել նրան Աղասու անունից, իր անունից բայաթի է հյուսել՝ և այնուամենայնիվ չի կարողացել քիչ թե շատ կենդանի կերպար ստեղծել։ Եթե այս երկուսը այնուհանդերձ մնում են մեր հիշողության մեջ, ապա Աղասուն գրած իրենց նամակներով։ Բայց ի՞նչ նամակներ են դրանք։ Ասես երկուսն էլ խնդրել են հեղինակին ոչ միայն իրենց փոխարեն գրել, այլև իրենց փոխարեն մտածել ու զգալ... Այդ նամակներից մինչև Համբոյի՝ Դիքորին գրած նամակը մեր գրականությունը հսկայական մի ճանապարհ պետք է անցներ։ Համբոյի նամակի հեղինակը ինքը Համբոն է, գրագետ լինի նա, թե անգրագետ, Նազլուի նամակն իրականությունից կտրված է նույնքան, որքան և ինքն է անիրական։ Այսքա՞ն մեծ է տարբերությունը լուսավորական ռեալիզմի և XIX—XX դարերի ռեալիզմի միջև։

Աղասու հորը՝ տանուտեր Օհաննեսին, հանդիպում ենք վեպի ամբողջ առաջին գլխում՝ երկու հակադիր հոգեվիճակներում, կոմիկական իրադրության մեջ և Աղասու արարքի վրա կոծելիս։ Նա բուռն է, ինչպես ուրախանալիս կամ կնոջ վրա բարկանալիս, այնպես էլ ահավոր վիշտը ապրելիս։ Աղասու գործած արարքը իմանալով՝ նա ուշաթափվում է երկու անգամ, զառանցում, ուշքի գալիս, նորից զառանցում... Սա նույնքան է զգայուն, որքան և իր զավակը, իսկ երկուսը միասին հար և նման են իրենց ծնող հեղինակին։

Հենց այստեղ էլ հարկ ենք համարում կանգ առնել Աբովյանի արվեստին խիստ բնորոշ մի հանգամանքի վրա։ Բանն այն է, որ նա իր հերոսների ոչ միայն անունները, այլև նախատիպերն ընտրում է իր իսկ միջավայրից, առա-

վելապես՝ իրենց տոհմից։ Այսպես օրինակ, Սառա-խաթուն տատին մենք հանդիպում ենք և՛ «Աղասու խաղը» պոեմում, և՛ այստեղ՝ «Վերքում», Նազլուի անվանը հանդիպում ենք նաև առանձին դրված բայաթիներում, իր հորեղբայր Հարություն Աբովյանի անվանը հանդիպում ենք նաև այս վեպի հավելվածում և այլն։ Այս հանգամանքը նրա գրական երկերին հաղորդում է մի առանձին գրավչություն և համոզչականություն։ Սորից և նորից կրկնենք. Աբովյանին խորթ են սուտն ու կեղծիքը. նրա չափազանցումները գեղագիտորեն այնպիսի շրջանակների մեջ են առնված, որ ընթերցողի կողմից (եթե միայն նա արվեստից հեռու կանգնած մի մարդ չէ) անմիջապես կռահվում է և գնահատվում ճիշտ այնպես, ինչպես կգնահատվեր դարձյալ տաղանդավոր, բայց միանգամայն այլ ոճ ու գրելաձև ունեցող գրողի խոսքը։

Այսպես ուրեմն, ինչպես էլ շարժվելիս լինի «Վերքի» հեղինակը, երևակայությամբ նա դուրս չի գալիս հարազատ միջավայրից։ Օգտվելով նրա արվեստի այս առանձնահատկությունից, մենք կարող ենք որոշել, թե իրապես Աբովյանի ինչն է Աղասին։ «Ջանգիում» հանդես բերված Հարություն Աբովյանին (գրողի հարազատ հորեղբորը) տանուտեր Օհաննեսը կոչում է խնամի (III, 26)։ Վեպի առաջին տարբերակում Փարպիի գյուղացիք, իմանալով Աղասու պատմությունը, զովում են նրան, ասելով. «Ապովենց օջախի ծուխն անպակաս ըլի, որ էդպես որդի ա բերել»։ Արդյո՞ք այս չի եղել պատճառը, որ հեղինակը մաքրագրելիս բաց է թողել այս տողը, դրա փոխարեն գրելով. «Օջախի որդին, կտրիչ Հայն էնպես կըլի» (հմմտ. III, 140 և 324)։

Այնուհետև. Փարպի գյուղում Աղասուն մորից և կնոջից նամակներ է բերում նրա հորեղբայրը՝ Ավետիքը։ Բայց սա մեր հեղինակի հարազատ հայրն է։ Ասել է թե՝ Աղասին ոչ այլ ոք է, քան որդին Հարությունի (կամ մի այլ հորեղբոր, որ մեզ անհայտ է)։ Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից շատ ավելի աշմարտապատում է վեպի առաջին, քան թե ավարտված տարբերակը։ Ուրեմն, Հարությունը, որ տանուտեր Օհաննեսի կողմից խնամի է հորջորջվում, և Աղասու որդիների խնամակալությունը հանձն առնող Հարություն Աբովյանը նույն անձն է, Աղասու իսկական հայրը՝ Խաչատուր Աբովյանի հարազատ հորեղբայրը։ Ուրիշ խոսքով, Աղասին Աբովյան գրողի հորեղբոր տղան է։

Անդրադառնանք այժմ Աղասու կերպարին։

Ամեն մի գրական հերոս իր հեղինակի երազների պտուղն է, նրա թշնամին ու միաժամանակ բարեկամը։ Մտահղացման առաջին իսկ օրից նա տանջում, խոշտանգում է իրեն երկնողին, այցելում է՝ երբ նա տանջահար է, փախչում է՝ երբ ինքն է հրավիրում, հայտնվում է այլևայլ կերպարանքներով, դիմագրում է, կամակորություններ անում, ընդվզում նրա կամքին և խորհուրդներին ու հորդորներին, փոխում է նրան, փոխելով ու վերածնվելով ինքը, մինչև որ վերջապես ու վերջնականապես պոկվում է նրանից, հեռանում է, դառնալով նրա ո՛չ թե զավակը, այլ հենց հոգեզավակը՝ օտար և միշտ հարազատ, հարազատների մեջ միակը, որ երջանկություն է պատճառում տվայտանքների ծանրածանր գնով...

Թվում է, թե հայ գրականության մեջ քչերը կարող են համեմատվել Խաչատուր Աբովյանի հետ՝ իրենց հերոսին «սիրելու» մեջ։ Սա տարօրինակ է հնչում, բայց անտարակույս այդպես է։ Աբովյանն, իրոք, սիրահարված է իր հերոսին։ Այդ սերը, որ և՛ խանդաղատանք է, և՛ հիացում, հետապնդել է նրան

ողջ կյանքում, լցրել, իմաստավորել է նրա էությունը։ Եթե նա գրած էլ չլիներ վեպի Հառաջաբանը, ապա դարձյալ կարելի էր կռահել, թե սրտի ի՞նչ դողով պետք է հյուսած լինի իր պատմությունը Աղասու մասին։ Նախ, դա առաջին վեպն էր հայ գրականության մեջ, ապա, այդ անունն առաջին անգամ ինքն էր մտցնելու քաջորդիներով այնքա՞ն հարուստ հայ ժողովրդի պատմության մեջ, վերջապես, դա ոչ այլ ոք էր, եթե ոչ իր արյունակիցը։ Դեռևս երեխա, նա ոչ միայն ոգևորվել էր նրա քաջագործություններով, այլև սիրվել ու փայփայվել նրա կողմից։ «Դեռ վարժատան աշակերտ էի,— հիշում է նա վեպում,— ու ինչպես էսօր կենդանի է մտքումս՝ Աղասին ինչպես մտավ Թիֆլիզ։ Երևելի իշխանի որդի չէր որ նրան մեծ փառքով ներս բերեին, բայց ով նրա արածը իմացել էր, ուղում էր ոտները ջուր անի՝ իմի։ Մեկ թըղթի միջում ծալած իրա ոսկորները քսան անգամ հենց ինձ ա ցույց տվել, որը որ զանազան տեղ կովներումը կոտրել՝ հանել էին» (III, 176)։

Քայլող մի լեգենդ է եղել Աղասին նրա համար։ Տոհմակից լինելը, կրկնում եմ, իր դերը խաղացել է անշուշտ, բայց Աբովյանի բնավորությունը ճանաչելով կարելի է ասել, որ նա Աղասուն կմեծարեր նաև այն դեպքում, եթե սա օտար լիներ։ Մի՞թե նա այլ կերպ է վարվում դսեղցի Հովակիմի կամ արծափեցի Մանուկի հետ։ Նրա համար Աղասին նույնանում էր հայրենիքի, իսկ նրա գործը՝ հայրենասիրության հետ։

Աղասու կերպարի հմայքը արտակարգ է եղել մեր հասարակական կյանքում։ Ընթերցողը սիրել է նրան առաջին իսկ ծանոթությունից, ինչպես որ առանց երկմտության ընդունել է նրա իդեալը՝ հայրենասիրության ու ազատասիրության իդեալը։ Աղասու՝ հարկադրաբար պատյանից հանված սուրը անցավ նրա գրական հետնորդներին, բոլոր նրանց, ովքեր թեև այլ պայմաններում, պետք է որ մարտնչեին ազատության համար։ Այդ թուրը, կոփվածկռած հեռու-հեռավոր լեգենդներում, մի կախարդական հատկություն ևս ուներ. նա անցնում է էպոսի հերոսներից իրական կյանքի հերոսներին և նրանցից՝ նորից էպիկական հերոսների ձեռքը կամ, որ համարյա նույնն է, նրանց ձեռքը, որոնց ինքն էր այդպիսին դարձնում։

«Աղասին ինքը Աբովյանն է» մտադրությունը և՛ օգնել է Աղասու կերպարի բացահայտմանը, և՛ վնասել։ Նմանություններ որոնելու ճանապարհին անտեսվել են տարբերությունները։ Երկու հիմնական գծերով է Աղասին նման ստացվել իր հեղինակին. աշխարհայացքով և աշխարհզգացողությամբ։ Բայց եթե բնավորությամբ նրանք համարյա թե նույնն են,— խոսքն այստեղ վերաբերում է առավելապես զգացմունքայնությանը,— ապա աշխարհայացքով նրանք նման են, հիշտ է, բայց նույնական չեն։

Որպես պատմական անձ Աղասին XIX դարի առաջին քառորդի ամենաուշագրավ դեմքերից մեկն է հայ հասարակական կյանքում։ Աբովյանին է պատկանում նրան ոչ միայն անհայտությունից փրկելու, այլև գրական կերպար ստեղծելու պատիվը։ Բայց չէ՞ որ ինչքան շահում է գրական կերպարը, այնքան կորցնում է պատմական, իրական անձը։ Արդ, կարելի՞ է արդյոք գրական այս կերպարից մակաբերել ու «վերականգնել» պատմական Աղասու ընդհանուր և հավաստի նկարագիրը։ Անպայման կարելի է, եթե մենք գիտենք Աբովյանի արվեստի առանձնահատկությունները։ Այդ դեպքում, թերևս, պետք է վարվել մոտավորապես այնպես, ինչպես վարվում են վերականգնողները,

երբ որևէ որմնանկարի նախշերը գտնելու համար հանում, հեռացնում են վերի, ավելի ուշ նկարված պատկերը։

Եթե այդպես վարվենք, մեր մտքի առաջ կկանգնի առնական մի տղամարդ, որ ռուսական սահման ոտք դնելուց հետո տնից-տուն, գյուղից-գյուղ անցնելուց և գրվատանքի բազմաթիվ խոսքեր լսելուց հետո հասկանում է, որ երեկ եթե մարդ է եղել, ապա այսօր քաղաքացի է, անդամը այն նոր ընտանիքի, որ կոչվում է ազգություն։ Եվ էլի հասկանում է, որ իր գործած սպանությունները մարդասպանություններ չեն եղել բնավ, որ ինքը մութ կերպով հասկանում էր, իհարկե, բայց անուն տալ չէր կարողանում։ Նույնպես և, իհարկե, գլխի է ընկնում, որ իր արարքների գումարն էլ այն գործերից է, որին ուսյալ մարդիկ ազգային գործունեություն են անվանում։ Անկարելի է, որ նա Թիֆլիսում հանդիպած լինի ժամանակի նշանավոր գործիչների, ասենք, Ներսես արքեպիսկոպոսի, Հարություն Ալամդարյանի, Գևորգ Սրմբատյանի և այլոց հետ։ Ի՞նչ կարող էր եղած լինել նրանց զրույցների առարկան. առաջին հերթին, իհարկե, ռազմաճակատի հարցը, Անդրկովկասի վիճակը ռազմական տեսակետից։ Մի՞թե նրանց համար պարզ չի եղել, որ Կովկասում Ռուսաստանը վարում է հեռահայաց ու հետևողական մի քաղաքականություն, որ, ասենք, Թիֆլիսն ապահով պահելու համար անհրաժեշտ է գրավել Երևանի բերդը։ Ասել է թե, այդ Աղասին պետք է որ նաև քաղաքական բովանդակությամբ հայացքներ ունեցած լինի։ Նրա մղած մարտերն ու մեծ կռիվները պարսկական բանակի ջոկատների դեմ, կռիվներ, որ մենք այսօր պարտիզանական կանվանենք, հավանորեն խրախուսվել են նաև ռուս սահմանապահ զորամասերի կողմից։ Ամբողջ հինգ տարի Աղասին գործել է սահմանային գծում, ինչը և նրան հնարավորություն է տվել հայտնվել մեկ պարսկական գոտում, մեկ՝ ռուսական։

Ծանոթությունը գրական հերոսի հետ սկսվում է այն պահից, երբ նա դատողություններ է անում ձգձգվող ժամասացության առթիվ։ Սա վիթխարի առաջադիմական քայլ էր մեր գրականության համար։ Հերթաթների ու նաղլզրույցների անվերջ ձգվող շրջանն ավարտված էր։ Ասպարեզ էր իջնում մտածող անհատը։ Ըմբոստությունը տիրապետող բռնակալության դեմ սկսվելու էր մտքի ըմբոստությամբ։ «Է՜հ, ժամ չի դառավ մեր գլխին, մեկ իշի հարսանիք դառավ, տո»,— ահա նրա առաջին խոսքը։ Այս արտահայտությունը 1858 թ. հրատարակության մեջ չկա։ Չի կարելի չնշել գրարննիչի քաղաքական զգոնությունը։ Թող, ուրեմն, այսուհետև ևս օգտվենք նրա մասնագիտական զգուշավորությունից, որոշելու համար Արովյանի և իր հերոսի ազատամտության սահմանները... Հանված են նաև հետևյալ տողերը. «էլ տուտը չեն կըտրում... որ փորիդ արբայություն ըլի» (III, 10)։ Այս հատվածն ամբողջացնելու համար չմոռանանք, որ արգելված է եղել նաև հետևյալ կտորը. «...ավետարան կարդալիս.... թե չէ ոտը բարին կառնի» (III, 10—11)։ Դատողությունների այս շարքից հանված է, վերջապես, մի կտոր, որ չեմ արտադրում մեծության պատճառով. այն սկսվում է՝ «Շատ անդամ բարկացած գալիս էր» բառերով և վերջանում՝ «որ կերածը հալալ ըլի» բառերով (III, 13—14)։

Ի՞նչ էր ուզում բնության անարատ այս զավակը եկեղեցուց։ Հավանորեն՝ վերանորոգում։ Աղատասիրական խոհերով տարված Արովյանը չէր կարող

հանդուրժել այն վիճակը, որ տիրում է հայ լուսավորչական եկեղեցում։ Խոսքը վերաբերում էր ոչ այնքան ծիսական կամ պաշտամունքային խնդիրներին, որքան հատկապես կղերին, որ վաղուց ի վեր ժողովրդին խորթացել էր և՛ բարքով, և՛ գիտության նկատմամբ ունեցած վերաբերմունքով, իսկ ավելի ճիշտ՝ բացարձակ տգիտությամբ։ Այստեղ Աղասու բերանով ոչ թե հեղինակն է խոսում, ինչպես թվացել է շատերին, այլ հենց ժողովուրդը, որովհետև բնության հետ կապված, բնության հետ կռիվ տվող մարդը երկրային կյանքի ունայնության քարոզին համառ կերպով հակադրում էր այդ կյանքին կառչած մնալու, այդ կյանքը երկարելու, բարեփոխելու բնազդական սկզբունքը։ Ժողովրդի զավակը եկեղեցի էր մտնում՝ աստծուն հանդիպելու, և ոչ թե նրա սպասավորների սպասավորներին։ Հենց այդ մասին է ասում Աղասին։ Եվ իզուր է հեղինակը նրա խոսքի տպավորությունը մեղմելու նպատակով նրան «էշ գեղցի» անվանում։ Այո՛, իհարկե, Աղասին չի դառնում «անհոգի, անաստված, իր հավատն ուրացած մարդ», բայց դառնում է մի մարդ, որ ծառանում է ստրկամտության, ոչխարային հնազանդության դեմ։

Ի՞նչ բան է առաջին մուտքը գլխավոր հերոսի համար. դա գրողի առաջին գիրքն է, զորավարի շահած առաջին ճակատամարտը։ Աբովյանը կարող էր հանգիստ լինել. իր հերոսն արդեն նվաճել էր ընթերցողի սերն ու համակրանքը։ Բազուկի քաջությունից առաջ նա ցույց էր տվել իր մտքի քաջությունը։

Հերոսի այս մուտքից հետո տրվում է նրա ընդհանուր բնութագրությունը։ Չնայած իր ծավալուն լինելուն, ժամանակակից ընթերցողի վրա այն զորեղ տպավորություն հազիվ թե գործի։ Բայց բոլոր ժամանակների ճաշակի համապատասխան գրելու պահանջը հիշեցնում է բնավ չգրելու պահանջը։

«Նրա սուրահի բոյը, նրա թուխ թուխ աչքերը, նրա դալամով քաշած ունքերը, նրա աննման, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձենը, նրա լեն թիկունքը, բարձր ճակատը ու ոսկեթել ճալվերը՝ մարդի խելք էին տանում, տեսնողը մաթ էր մնում, չէր կշտանում։ Սազը ձեռն առածին պես քարին, փետին՝ շունչ, հոգի, լեզու էր տալիս։ Ղորդ ա, արևն երևսն էրել, գունը փախցրել էր, ամա ծիծաղելիս՝ որ աչք ու ունքը չէր բաց անում, հենց իմանաս՝ վարդ է բաց ըլում, երեսիցը լիս վեր թափում։ Նրա թվանքի գյուլլեն դարդակ չէր անց կենալ։ Սիրտն էնքան բարի էր՝ որ նհախ տեղը ղուշ էլ չէ՛ր սպանիլ, մոջիմը չէ՛ր կոխիլ. ամա հարամի թշնամու ձեռին տապակվելով գիշեր ցերեկ, որ՝ թե էնպես էր պատահում, որ թուրքերն էկել էին բաղը լցվել, կամ իրան սպանիլ, կամ իր հարևանիս, էն ժամանակը երկընբումն ըլեր, վեր կրգար, գեղի էն կողմիցը ձեն տային, իսկույն ական թոթափել հազիր էր, ու թե բառով բանը չէ՛ր վերջանում, էն ժամանակը նա իրան թրի, թվանքի ու կռան հունարը է՛նպես էր ցույց տալիս, որ թշնամին մնում էր կատու դառած. կամ նրա ձեռին, հնձանի տաքարին ղուրբան ըլում, որ թաղում, ծածկում էին, չունքի հազար անգամ լին փորձել, վարավուրդ արել՝ թե մինչև Տաճկին չծեծես, քեզ բարեկամ չի դառնալ» (III, 16)։

Մի անգամ, որ մենք որոշեցինք Աբովյանի դիտարկման կետը, մի անգամ, որ մենք հավաստեցինք նրա ազդակցությունը էպոսի հետ,— այլևս չպիտի զարմանանք ո՛չ Թագուհու առևանգման ժամանակ նրա հանդես բե-

րած քաջության, ո՛չ էլ հետագա սխրագործությունների վրա։ Վերցնենք հենց Աղասու խոսքը՝ ուղղված փառաշներին։ Հասկանալի է ինքնին, որ նրա առաջին և վերջին հարվածների միջև ակնթարթների տարբերություն պետք է որ եղած լինի, ո՛չ ավելի. ասել է թե՝ իր խոսքը նա ավելի շուտ մտածել է, քան արտասանել: Եվ մենք ճիշտ այդպես էլ ընկալում ենք։ Չէ՞ որ, ի վերջո, մենք գործ ունենք գրական արվեստի հետ, որտեղ պայմանականությունը անբաժան է պատկերից։

Աղասին գեմ է դուրս գալիս Սարդարի հրամանին, կոտորում է նրա ծառաներին։ Ի՞նչ էր սպասում նրան, ի՞նչ էր սպասում ամբողջ Քանաքեռին։ Մրնալը նույնքան անխոհեմ քայլ կլիներ, որքան և փախչելը։ Եվ ահա իր փոխարեն վճիռը հավատարիմ բարեկամներն են կայացնում. «Ընկերներն էլ ժամանակ չկորցրին. գիտեին, որ բոլորի վերջը մահն է, էլ ո՛չ հոր մտիկ արին, ո՛չ մոր, Աղասուն կապեցին ձիու վրա ու ընկան Աբարանու սարը, որ կամ Փամբակ փախչեին կամ Ղարս կամ Ախալցխա, որ իրանց գլուխը թափեն» (III, 126)։ Ամբողջ հետագա պատմությունն այն մասին, թե ինչպես նա մի քանի անգամ ուշագնաց է լինում, թե ինչպես Մուսան Աղասուն իր ուսերին դրած է մտնում Ապարանի քանդված եկեղեցին,— այս ամենը, ինչպես երևում է, այն իմաստով պետք է հասկանալ, թե հենց դա է պատճառ դառնում, որ ուշքի գա միայն հրացանների պայթյունից, թուրքերի վրա հարձակվի մենակ ու անուշադիր լինելով՝ գերի ընկնի նրանց ձեռքը։

Արկածայնության որոշ տարր ունի՞ այս տեսարանը։ Անպայմա՛ն։ Բայց ահա տեսեք նորությունը. առաջին անգամ լինելով՝ Աբովյանը փորձում է հոգեբանորեն հիմնավորել իր հերոսի արարքը կամ նրա գլխին եկածը։ Աղասին մինչ այդ միշտ էլ պատրաստ է եղել սրով հանդիպելու թշնամիներին, բայց այս մեկը ցնցող է իր հետևանքներով. նա փաստորեն կործանման էր դատապարտում ամբողջ հայրենի գյուղը։ Ուրեմն, քննադատական այն դիտողությունը, թե իբր ուշաթափված կամ ուշքը խսպառ կորցրած Աղասու մեջ երևում է հեղինակի սենտիմենտալիզմը,— անարդարացի է միանգամայն։

Հեղինակի երևակայության արդյունք է արդեն վերջին տեսարանը. Աղասու սպանությունը՝ հոր, ինչպես և Մուսայի ու նրա հոր մահը բերդի մուտքի մոտ։ Վիպական է այս զույգերի մահը, բայց ոչ թե էպիզոդի հիմքը կազմող Աղասու դավադրական սպանությունը թուրքերի կողմից։ Դրա իսկության մասին վկայում է և Պերճ Պռոշյանը։ Իր «Խաչատուր Աբովյան» խորագիրը կրող հոդվածում նա պատմում է. «Մինչև այսօր մեզանից շատերի կարծիքն է, որ Աղասին հեղինակի երևակայության մեջ ստեղծած մի անգո հերոս է, բայց ես դեռ տասը տարեկան մանուկ՝ հորիցս լսել եմ, որ Երևանի առման ժամանակ, բերդի փակված դռան բանալու ծակից, պարսիկները ատրճանակի գնդակով սպանեցին Ապովենց տանուտեր Օհանեսի տղա Աղասի աղին, որ ոսկի ափիցար էր, պապդան ապալաթներն ուսին, ու սալդաթների առաջն ընկած բերդի դուռը կտրել էր, թուրքերին դրսից գոռում էր, որ անիրավ շուն Հասան խանը բերդի բանալիքները դուրս ղրկի, բերդի դուռը բաց անի։ Հետո էն աղեն,— պատմել է Պռոշյանի հայրը,— անումս ու որտեղացի լինելն հարցրեց ու ասեց,— երբ որ բերդը կմտնենք ու քիչ կհանգստանանք, դու արի ինձ մոտ, քեզ նշան տալ կտամ, հարցրու քանաքեռցի Ապովենց Աղասուն, էդ ես եմ։ Ասեց, ինձ թողեց ու գնաց բերդի դռան առաջին, դռան էս

Լրեսին անհավատ Թուրքի փշտովից (ատրճանակ) գյուլլախորով փովեց» (III, 394)։

Աղասին Աբովյան-ստեղծագործողի վիթխարի նվաճումն է, նրա բոլոր նվաճումների պսակը։ Նա երկու անհատականությունների համաձուլվածք է՝ պատմական հերոսի և իրեն իսկ հեղինակի։ Բայց եթե նա երկու անուն ունի՝ Աղասի և Խաչատուր, ապա նա ունի միայն մեկ ազգանուն՝ Աբովյան։ Եթե Անիի ավերակներում մոլորված շրջողը Աղասին է, ապա այնտեղ հայ պետականության մի բախտավոր օր (թեկուզ հեռու ժամանակներում) վերականգնելու մասին երազողն արդեն Աբովյանն էր։

Այսպիսին է հայ նոր գրականության առաջին հերոսի բնութագիրը ընդհանուր գծերով։ Նրան ոչ մի դեպքում չի կարելի համեմատել մյուս գործող անձերի հետ։ Մի պահ կարելի է ասել, թե «Վերք Հայաստանին» այն վեպերի թվին է պատկանում, որոնք մեկ հերոս են ունենում։ Բայց դա համեմատություն կլինի միայն և ուրիշ ոչինչ. «Վերք Հայաստանին», իրոք, չէր կարող այդ վեպերի թվին պատկանել հենց այն պատճառով, որ էպիկական լայն շունչ ունի։ Ավելի ճիշտ կլինի ասել, թե «Վերքում» հանդես բերված անձերը մեր հիշողության մեջ տպավորվում են ոչ այնքան իրենց բնորոշ հատկություններով (դիմագիծ, խոսելու եղանակ, քայլվածք, հագուստ, կենցաղային սովորություն և այլն, և այլն), որքան գործողությանը հանդես բերած իրենց մասնակցությամբ։ Եվ բոլոր հերոսների մեջ, որպես մի հսկա անհատականություն, բարձրանում է «Վերք Հայաստանիի» անմոռաց հերոս Աղասին, որը հանդես է գալիս ոչ միայն որպես գործող անձ, այլև իբրև խարակտեր, որ ստեղծված է գործողությամբ և տանում է այդ գործողությունը։

ИСТОРИЧЕСКАЯ КАНВА ДЕЙСТВУЮЩИХ ЛИЦ РОМАНА «РАНЫ АРМЕНИИ»

Н. А. МУРАДЯН

(Резюме)

В статье рассматриваются действующие лица романа Х. Абовяна «Раны Армении» как исторические персонажи (Валерпан Мадатов, Гасан-хан, Ованнес Туманян, Саркис, Вардан).

Более подробно представлен образ Агаси, в котором выступает историческая личность Агаси Абовяна. Агаси как образ — выдающееся достижение Абовяна-художника, венец его творчества. Герой романа представлен как своеобразный сплав исторической личности и самого автора.

Другие личности, представленные в «Ранах Армении», впечатляются не столько присущими им характерами, сколько участием в исторических событиях, показанных в романе.